ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՎՊԲՔ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման միջոցով ավտոմեքենայի գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստի

կայացած <<Վանաձորի պետական բժշկական քոլեջ>> ՊՈԱԿ-ի շենքում

18 դեկտեմբերի 2017թ., ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ Ա. Գևորգյանը,

հանձնաժողովի քարտուղար Վ. Մեսրոպյանը.

հանձնաժողովի անդամներ Վ. Սիմոնյանը, Կ. Մկրտչյանը

Ընդունել ի գիտություն, որ

ՎՊԲՔ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում 1-ին տեղ զբաղեցրած մասնակից <<Տոյոտա Երևան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերն առկա են և համապատասխանում են սահմանված պահանջներին:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով նախատեսված եզրակացության համաձայն մասնակիցը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Հանձնաժողովը որոշեց.

1. ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու մասին մասնակցի հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

Որոշումն ընդունվեց կողմ 3, դեմ՝ 0 ձայնով:

2. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մասնակցի որակավորման հատկանիշները և ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող, վերջինիս հայտարարել ընտրված մասնակից և ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Որոշումն ընդունվեց կողմ 3, դեմ՝ 0 ձայնով:

3. հաստատել ՎՊԲՔ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը և հրապարակել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Որոշումն ընդունվեց կողմ 3, դեմ՝ 0 ձայնով:

4. արդյունքների ամփոփման նպատակով նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը ի հայտնի դառնալու օրվան հաջորդող օրը, ժամը 11.00-ին <<Վանաձորի պետական բժշկական քոլեջ>> ՊՈԱԿ-ի շենքում:

Որոշումն ընդունվեց կողմ 3, դեմ՝ 0 ձայնով:

Հանձնաժողովի

նախագահ՝ Ա. Գևորգյան

քարտուղար՝ Վ. Մեսրոպյան

անդամներ՝ Վ. Սիմոնյան

Կ. Մկրտչյան